**Արձանագրություն N 2-2**

**ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/13 ծածկագրով ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Քարաշենի միջնակարգ դպրոցի հանդիսությունների դահլիճի և ճաշարանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան — 23.06.2026թ. ժամը 10:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Զոհրաբյան |
| Անդամներ՝ | Ա. Քոչարյան |
| | Հ. Գինովյան |
| | Տ. Կոմիտասյան |
| | Ս. Նունյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Մանուչարյան |

**1. Գնման ընթացակարգի մասնակցի հայտի ուսումնասիրության մասին**

---

(Ա. Զոհրաբյան)

1.1 Գնման ընթացակարգի մասնակցի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

**<u>«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի</u>** կողմից հայտով չեն ներկայացվել

- աշխատակազմի մասին տվյալները, մասնավորապես լիազորված մարմինների կողմից տրված արտոնագրերը, իսկ նախահաշիվ կազմող և շինարարական աշխատանքների կազմակերպման մասնագետների համար ԲՈՒՀ-ի կողմից տրված դիպլոմները:
- CV՝ համաձայն հրավերով ներկայացված ձևաչափի:
- Աշխատակիցների գրավոր համաձայնությունները նշված ծառայությունները մատուցելու վերաբերյալ:
- Էսքիզային նախագիծը:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 24.06.2026թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումը ներկայացնելու դեպքում, հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի: Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/13 ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի a.manucharyan@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -5 դեմ-0:*

## 2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

---

(Ա. Ջոհրաբյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 25.06.2026թ. ժամը 10:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -5 դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ____________________ Ա. Ջոհրաբյան

Անդամներ՝ ____________________ Ա. Քոչարյան

____________________ Հ. Գինովյան

____________________ Տ. Կոմիտասյան

____________________ Ս. Նունյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ____________________ Ա. Մանուչարյան